# Դրամաշնորհային ավարտական հաշվետվություն

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գավառ) |
| **Դրամաշնորհի N** | «1032-11002/23-ԳԳ» |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2023 - 31.12.2023 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.01.2023 - 31.12.2023 |
| **Ներկայացման օր** | 09.01.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրով նախատեսված հիմնական գործողություններն են.

1) **խնամքի ծառայություններ** հայցող ուղեգրված շահառուների անհատական կարիքների գնահատում և կիսամյակային վերագնահատում,

2) անհատական սոցիալական ծրագրի կազմում և կիսամյակային վերանայում,

3) խնամքի ծառայությունների տրամադրում՝ շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

Ա) ***կենցաղային սպասարկում*** - 25 շահառուներին տրամադրել սոցիալական խնամողի ծառայություններ (տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ և այլն):

Բ) ***բժշկական օգնություն և սպասարկում*** - Բուժքույրերի կողմից իրականացնել տնայցեր 25 շահառուներին (արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ներարկումներ, անհրաժեշտության դեպքում վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, բուժման, դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրվում), ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ՝ առավել բարդ հետազոտությունների կատարման համար, խորհրդատվության տրամադրում շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ՝ առողջ սննդակարգի, անձնական հիգիենայի կանոնների պահպանման, հիվանդությունների կանխարգելման, ծերաբանության և ծերաբուժության վերաբերյալ:

Գ) ***Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն*** - Սոցիալական աշխատողի կողմից շահառուներին տրամադրել սոցիալական խորհրդատվություն/շահերի պաշտպանություն, միջնորդում, ուղղորդում այլ կառույցներ և այլն:

Դ) ***մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում*** – Շահառուների հասարակական կյանքն ակտիվացնելու նպատակով կազմակերպել տարբեր միջոցառումներ՝ նշելով տաղավար տոները, հիշարժան օրերը, ծննդյան օրերը:

Ե) ***դեղորայքի տրամադրում*** – Յուրաքանչյուր ամիս շահառուներին տրամադրել դեղորայք միայն բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով: Ըստ կարիքի՝ կամավորները և ծրագրի բուժքույրերը լիազորված են շահառուի կողմից որպեսզի ստանան նրան հատկացված դեղորայքը պոլիկլինիկաներից:

Զ) ***սննդի տրամադրում***- Երկու ամիսը մեկ անգամ շահառուներին տրամադրել սննդի փաթեթներ և հիգիենիկ միջոցներ: Սննդի փաթեթի մեջ ներառված են անհրաժեշտ կալորիականությամբ սննդամթերք:

Է) **Կոմունալ վարձավճարների փոխհատուցում** - Իրականացնել կոմունալ վարձերի փոխհատուցում ձմռան ամիսների համար:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտիաղյուսակ) և միջոցառումների ,նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրի իրականացման ընթացքում ծառայություններ են մատուցվել 65 տարեկանից բարձր և/կամ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող 27 շահառուի:
Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է ծրագրում ներգրավված շահառուների կարիքի գնահատում՝ կիրառվելով կազմակերպության կողմից մշակված կարիքի գնահատման ձևաթուղթը: Գնահատված կարիքներին համարժեք յուրաքանչյուր շահառուի հետ կնքվել է սոցիալական ծառայությունների մատուցման պայմանագիր: Կարիքի գնահատումից հետո բազմամասնագիտական թիմի կողմից յուրաքանչյուր շահառուի համար մշակվել է Անհատական սոցիալական ծրագիր, որի հիման վրա իրականացվում է շահառուի խնամքը:

Շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան իրականացվել է խնամքի ծառայությունների տրամադրում, մասնավորապես՝

**Կենցաղային սպասարկում**

Շահառուներին տրամադրվել է սոցիալական խնամողի ծառայություններ, ով տնայցերի ընթացքում իրականացրել է շահառուի խնամք, տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուների լվացքը տեղափոխվել է կենտրոն, լվացվել, արդուկվել և հաջորդ այցելության ժամանակ հետ է վերադարձվել շահառուին: Այն շահառուների լվացքը, որոնք իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոց.խնամողների կողմից կատարվել է շահառուի բնակարանում: Սոցիալական խնամողի կողմից հիմնականում տնայցեր են կատարվել Ա խմբի շահառուներին օրական 2 անգամ՝ 1-ական ժամով և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2 անգամ՝ 1-ական ժամով: Ըստ շահառուի կարիքի և տարբերի իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:

Ծառայությունների մատուցման կատարողականն ամրագրվում է ծառայությունների մատուցման ստուգաթերթերում և շահառուների ստորագրությամբ՝ շահառուների մոտ գտնվող տնային թերթիկում:

Ծրագրի շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահովված է իրեն անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայություններով:

**Բժշկական օգնություն և սպասարկում**

Բուժքույրն իրականացրել է տնայցեր շահառուներին, որի ընթացքում ստուգվել է առողջական վիճակը, իրականացվել է արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ըստ անհրաժեշտության կատարվել են ներարկումներ, վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, տրամադրվել է բուժման, ինչպես նաև դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվություն՝ ընտանեկան բժշկի հետ համագործակցությամբ: Բուժքույրը նաև խորհրդատվություն է տրամադրել շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական տարբեր թեմաների շուրջ: Բուժքրոջ կողմից կատարվել է ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ առավել բարդ հետազոտությունների կատարման համար, ուղեգրերի ստացում՝ շահառուների բուժումը ստացիոնար պայմաններում և/կամ բժշկական զննությունը պետպատվերի շրջանակներում կազմակերպելու համար: Շարժունակության խնդիր ունեցող շահառուների համար պոլիկլինիկաներից անվճար տրամադրվող դեղորայքը ստացել է ծրագրի բուժքույրը, որը լիազորված է շահառուի կողմից՝ ստանալ դեղորայքը և հանձնել իրեն:

Բուժքրոջ կողմից իրականացվել են այցելություններ Ա խմբի շահառուներին շաբաթական առնվազն 2 անգամ և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական առնվազն 1 անգամ: Ըստ շահառուի

կարիքի և տարբեր իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:

Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում: Տարեցների առողջական վիճակը պահպանվում և բարելավվում է տրամադրված ծառայության շնորհիվ:

**Սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն, ուղեկցման ծառայություններ**

Սոցիալական աշխատողը մշտապես շահառուների կողքին է ցանկացած թղթաբանություն կազմակերպելու կամ սոցիալական ոլորտին առնչվող խորհրդատվություն ստանալու կարիքի դեպքում: Լուծվել են բազմաթիվ իրավական խնդիրներ, որոնք առնչվել են այլ կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Կադաստրի կոմիտեի Գավառի տարածքային գրասենյակի, Գավառի ՄՍԾ-ի հետ: Սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների փաստագրում անապահովության գնահատման համակարգում: Սոցիալական աշխատողի կողմից շահառուներին ըստ անհրաժեշտության տրամադրվել է խորհրդատվություն: Կատարվել է նաև շահառուների ուղղորդում կամ ուղեկցում համայնքապետարան, մարզպետարան կամ այլ պետական կառույցներ, օժանդակութուն աջակցության դիմումների լրացման գործում:

Այցերի և իրականացված գործողությունների վերաբերյալ նշումները կատարված են ծառայությունների մատուցման ստուգաթերթում, ինչպես նաև տնային թերթիկում: Շահառուները տեղեկացված են և պատրաստ են պաշտպանել իրենց իրավունքները, ինքնավստահ են, համարձակ, կարող են դիմումներ ներկայացնել տարբեր կառույցներ և/կամ անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնել

Կիսամյակը մեկ անգամ իրականացվել է նաև շահառուների կարիքի **վերագնահատում և մատուցվող ծառայություններից բավարարվածության չափում**: Վերագնահատման արդյունքում փոփոխություններ են իրականացվել անհատական սոցիալական ծրագրերում: Ըստ գոհունակության գնահատման արդյունքների՝ շահառուների 90 տոկոսը բավարարված է տրամադրված ծառայություններից: Տարեցները բավարարված են ծրագրային թիմի ժամանակացույցով կատարվող այցերից և հոգատար վերաբերմունքից: Ծրագրի բազմամասնագիտական թիմը բարեխղճորեն է կատարում իր աշխատանքային պարտականությունները: Այցերը կատարում են ըստ ժամանակացույցի, կարիքի դեպքում՝ նաև արտահերթ:

**Մշակութային միջոցառումների կազմակերպում**

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են տաղավար տոների, հիշարժան օրերի, ծննդյան օրերի նշումներ, էքսկուրսիաներ, տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 6 միջոցառում, որոնց հիմնականում մասնակցել են տեղաշարժման հնարավորություն ունեցող շահառուները:

- Փետրվարի 19-ին Գավառի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում կազմակերպված «Գիրն ու գիրքը մեր» խորագրով միջոցառմանը մասնակցեցին ծրագրի 6 շահառուներ:

- Փետրվարի 14-ին՝ նորապսակների օրհնության օրը, ծրագրի 7 շահառուներ այցելեցին Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցի:
- Ապրիլի 12 -ին նշվել է «Մայրության և գեղեցկության» տոնը, որին մասնակցել են ծրագրի 7 շահառուներ:
- Հունիսի 9-ին կազմակերպվել է ուխտագնացություն Նորավանքի վանական համալիր՝ ծրագրի 7 շահառուների մասնակցությամբ:
- Հունիսի 27-ին 12 շահառուներ մասնակցել են ճանաչողական էքսկուրսիային դեպի Նորատուսի խաչքարեր:
- Հոկտեմբերի 30-ին Գավառի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում ծրագրի 6 շահառուներ մասնակցել են Ժաննա և Լևոն Բլբուլյանների մեծարման երեկոյին:

Կազմակերպված միջոցառումների օրակարգերը, մասնակցության թերթիկները, լուսանկարները, ստացականները պահպանված են ծրագրային թղթապանակներում:

Կազմակերպված այցերի և անցկացված միջոցառումների շնորհիվ բարձրացել է տարեցների արժանապատվության և ինքնավստահության զգացողությունը: Նվազել է նրանց սոցիալական և հոգեբանական մեկուսացման զգացողությունը:

**<u>Սննդի, հիգիենիկ պարագաների, դեղորայքի տրամադրում</u>**

Յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ տարեցներին տրամադրվել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, որոնց մեջ ներառված են եղել անհրաժեշտ սննդամթերք և առաջին անհրաժեշտության պարագաներ: Շահառուներին տրամադրվել է բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով այն դեղորայքը, որը պոլիկլինիկաներից չեն կարող ստանալ: Արդյունքում մեղմվել է շահառուների սոցիալական կարիքը:

Սննդի, հիգիենիկ պարագաների, դեղորայքի գնման հաշիվ-ապրանքագրերը, փաթեթների տրամադրման ստացականները, գրանցաթերթիկները, նկարները պահպանված են թղթապանակում:

Տարեցների բնակարանների ջեռուցում և նրանց համար տաք ձմեռ ապահովելու նպատակով իրականացվել է կոմունալ վարձավճարների փոխհատուցում՝ ձմռան ամիսներին:

Ծրագրային թիմի կողմից շահառուների համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների, անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիապրոդուկտներ և այլն)**

Մարիետա Գոզեյանի պատմությունը – https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0J87YyMYbL24hyQ6iZNpKnBiAF2dgy7YzXX96z93ACcmHEHd4XV7WFWuCuz6ErFyJl

Տնային խնամք ծրագրի ռազմավարական պլանավորում –
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02HtF5KdS9qKaeB9acRqHc4WW9iDepPKoFab4zr4BGHFaduswLy6jcwT3q1PenCAexl
Հայկական Կարիտասի տարեցների խնամքի ծրագրերի վերաբերյալ ինֆոգրաֆիկա, որոնք իրականացվում են ԱՄՀՆ դրամաշնորհների շրջանակներում https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0PuPXcnDoG8hkCw2HHQiLzyGv1mtQKoLJFYzFjn3baHvcbdYYEPjZWkztXbghUkgGl
Տնային խնամք ծրագրի մասին հաղորդում Հանրային ռադիոյում

Այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքի վերաբերյալ հավաքվում և պահպանվում է անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները:
Տարվա ընթացքում 4 եռամսյակային հաշվետվություններին կից ներկայացվել են ինֆոգրաֆիկաներ, հաջողության պատմություններ, նկարներ:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում էական խնդիրներ կամ խոչընդոտներ ի հայտ չեն եկել: Նախկինում ձևավորված սերտ համագործակցությունը համայնքային կառույցների, պոլիկլինիկայի և ՄՍԾ-ի հետ շարունակվում է:

**2.4Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Ծրագիրն ավարտվել է դեկտեմբերի 31-ին:

**2.5Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրով չնախատեսված միջոցառումներ չեն իրականացվել:

**Շահառուներ****

| | Անուն | ազգանուն | Համայնք,հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սոֆիկ | Ավագյան | Ք. Գավառ Ազատության 21/33 | 077212347 | 5702510097 | |
| 2 | Ռաֆիկ | Շահբազյան | Ք. Գավառ, Ազատամարտիկների | 077534245 | 2709390108 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 15/2 | | | |
| 3 | Ազիզ | Թոփլաղացյան | Ք. Գավառ, Ազատության19/26 | 043388358 | 6903510052 | |
| 4 | Գոհար | Արզաքանցյան | Ք.Գավառ, Ազատության 36/42 | 0264-2-17-2 | 7703390097 | |
| 5 | Ամալյա | Այեյան | Ք. Գավառ, Զորավար Անդրանիկի 70 | 098047478 | 5107475051 | |
| 6 | Ռաֆիկ | Պետեյան | Ք. Գավառ, Ազատության 33/4 | 094588044 | 1712400126 | |
| 7 | Թամարիկ | Սարդարյան | Ք. Գավառ, Ազատության 28/5 | 094909718 | 7005490078 | |
| 8 | Սոնիկ | Վարդանյան | Ք. Գավառ, Կաբելագործների 53/35 | 0264-2-33-54 | 7409470054 | |
| 9 | Սոնե | Պետրոսյան | Ք. Գավառ, Ազատամարտիկների 44/6 | 093466132 | 6003500069 | |
| 10 | Լիդա | Ջիրոյան | Ք. Գավառ, Ազատության 23/18 | 096575551 | 6102360095 | |
| 11 | Գոհար | Խապիրյան | Ք. Գավառ, Հ.Աբրահամյան 4 | 077108318 | 7912340114 | |
| 12 | Լենա | Դաղոյան | Ք. Գավառ, Միքայելյան 11 | 098860658 | 6509480085 | |
| 13 | Մարիան | Սահակյան | Ք. Գավառ, Բունիազյան փ 2 նրբ.տ. 79 | 094723898 | 6303480012 | |
| 14 | Սեմար | Հակոբյան | Ք. Գավառ, Բունիազյան 2/2 նրբ, տ.3 | ---- | 2402440082 | |
| 15 | Մարիետա | Չարվադարյան | Ք. Գավառ, Սայաթ Նովա 58 | 091283665 | 5509410051 | |
| 16 | Շողիկ | Գափոյան | Ք.Գավառ, Գ.Լուսավորիչ 1 | 077599336 | 5414520496 | |
| 17 | Թամարա | Արոյան | Ք. Գավառ, [illegible] 1/24 | 094551796 | 5414520496 | |
| 18 | Սվետլանա | Ղարաբաղցյան | Ք.Գավառ, Նալբանդյան 75 | 091529130 | 6007440117 | |
| 19 | Անահիտ | Կիրակոսյան | Ք.Գավառ, Կաբելագործների 44/4 | 098589344 | 8702530306 | |
| 20 | Օֆիկ | Այվազյան | Ք.Գավառ, Բունիազյան 2, 4 անց.տ 6 | 094913634 | 6304580096 | |
| 21 | Դիանա | Սարկիսյան | Ք. Գավառ, Ազատության 23/2 | 099028055 | 6102830897 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 22 | Մարիետա | Գոզեյան | Ք. Գավառ, Արծրունի եղբ. 28/2 | 099084873 | 6802420147 | |
| 23 | Օֆիկ | Մարգարյան | Ք.Գավառ, Նալբանդյան 52 | 2-34-89 | 5107345719 | |
| 24 | Սիմա | Մոսյան | Ք. Գավառ, Բարեկամության 4Ա 70/9 | 077273151 | 5809320046 | |
| 25 | Ռիմա | Ռափյան | Ք.Գավառ, Ազատության 8/22 | 093420645 | 6414360074 | |
| 26 | Ռիմա | Հայրապետյան | Ք. Գավառ, Բարեկամության 4ա, 7 | 098184414 | 6212410224 | Մահացել է 20.06.2023 |
| 27 | Արամ | Նաջարյան | Ք.Գավառ, Բարեկամության 4ա, 70/17 | 093604473 | 3008360181 | Մահացել է 02.11.2023 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

____________________ Ս.Մուրադյան

(ստորագրություն) Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝

____________________ Գ.Տարասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/25 (Ծրագրի ողջ ընթացքում՝ 27 շահառու) |
| 1.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 22 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –3<br>Բ - 22 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 25 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 25 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 25 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 14 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 25 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>լվացքատան ծառայություններ | 8 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան ____________ «09» ____01____ 2023 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

____________________

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

____________________

(ստորագրություն)

Կ.Տ.